*եւ անհաստատ են: Ըստ ամենայնի* անվստահելի է *համարում Բոդենշտէդտ ռուս պաշտօնեաների ընձեռած թուական տուեալները, որով եւ հասկանալի է դառնում այն խիստ* վերապահութիւնը, *որ մեր հեղինակը ցոյց է տալիս Կովկասին վերաբերող վիճակագրական տըուեալներին: Ահա այն թիւերը, որ մենք գըտնում ենք վերոյիշեալ հատուածի մէջ.—*

«*Կովկասի* արական բնակչութեան *վերաբերող զանազան տուեալները», ասում է Բոդենշտէդտ, «տարբերւում են 1 եւ 1½ միլիոնի մէջ»:*

*«Երբ մենք,— շարունակում է նա,— իրար հետ բաղդատում ենք ծանօթ երկրամասերին (Կովկասի) վերաբերող կլոր թիւերը, որ դըրուած են մեր առաջ, ստանում ենք հետեւեալ արդիւնքը.—*

| | *Հոգի* |
|---|---|
| Քարթվէլ (*վրացական*) *ցեղեր*՝ | 300,000 |
| Հայեր | 135,000 |
| Թուրք ցեղեր եւ պարսիկներ՝ | 350,000 |
| Լեզգիներ | 350,000 |
| Աբխազ եւ չերքեզ ցեղեր՝ | 150,000 |

*«Եթէ սրանց վրայ աւելացնելու լինինք նաեւ քիստ ցեղերին, օսերին, ինչպէս եւ ուրիշ՝ բոլորովին անծանօթ ցեղերի վերաբերող թիւերը, այդ պարագային իրականից բարձր չի ներկայացնի* 1½ միլիոնը: *Թէ բնակիչների ընդհանուր թիւը որպիսի ակնբախօրէն* աննըշան՝ *համեմատութիւն է ներկայացնում* երկրի մեծութեան *հանդէպ, կարիք չկայ մինչեւ իսկ շեշտելու»:*

*Այժմ տեսնենք, թէ Բոդենշտէդտ թուական ի՞նչ* մանրամասներ *է մեզ հաղորդում* հայութեան մասին *Կովկասի զանազան շրջաններում: Մեր ուշադրութիւնը գրաւում են նախ եւ առաջ «Հայկական Շրջան»ի (Երեւանի եւ Նախիջեւանի նախկին խանութիւններ) վերաբերող թուերը:*

*«Կովկասի ժողովուրդներ» աշխատութեան մէջ մի ուրիշ տեղ (էջ 160) ասելով, թէ* «Ռուսաստանում ապրող հայերի թիւը հաշւում են մօտաւորապէս 400,000», *եւ թէ՝ «Ռուսա-Հայաստանը բաժանւում երկու երկրամասի* (Distrikt), *Բոդենշտէդտ շարունակում է.*

*«Այդ երկրամասերից առաջինը՝* Երեւանի *երկրամասը*12) *ունի* 500 *գիւղից աւելի եւ* 70,000–80,000 *բնակիչ: Այդտեղ ապրող* թուրք ցեղերը, *որոնք իրենց մօրուքը քինայով ներկելու սովորութիւնն ունենալու պատճառով* Ղըզըլբաշ *են կոչւում, այսինքն՝* Կարմրագըլուխներ, *կազմում են ազգաբնակութեան* գրեթէ կէսը: *Այդ երկրամասի* իշխող լեզուներն են թուրք-թաթարերէնը *եւ աշխարհաբար* հայերէնը, *գրաբարի մի աղճատուած բարբառը:*

*«Գլխաւոր քաղաքը՝* Երեւան, *որ այգիների մէջ թաղուած եւ անկանոն շինուած մի քաղաք է, աններկայանալի տներով, ունի 7–8000 բնակիչ: Երեւանից ոչ հեռու գտնւում է* Էջմիածնի *հռչակաւոր վանքը: Երեւանի երկրամասին անմիջապէս սահմանակից է* Նախիջեւանի13) *երկրամասը՝* 194 *գիւղերով ու մօտ* 20,000 *բնակիչներով, որոնց* ⅔*-ը թաթարներ — թիւրքեր — են, Շիա դաւանութեամբ: Այդ երկրամասը արեւելքից սահմանակից է Ղարաբաղին, իսկ հարաւ-արեւմուտքից Երասխ գետով բաժանւում է Պարսկաստանից:*

*Անցնինք «Հայկական Շրջան»ից դուրս գտնուող միւս գաւառներին.— Ալեքսանդրապոլի երկրամասը* (Distrikt) *բաղկացած է* Փամբակ *եւ* Շորագեալ թաթարական գաւառակներից (Distanz) *եւ պատկանում է վրաց — Իմերէթեան նահանգին:*
*Սահմաններն են՝ արեւմուտքում տաճկական նահանգները, հիւսիսում եւ արեւելքում՝ Ախալցխայի փաշայութիւնը եւ Բորչալուի ու Ղազախի գաւառակները, իսկ հարաւում՝ Ռուսա-Հայաստանը: Գլխաւոր քաղաքը՝* Ալեքսանդրապոլ՝ *իր նշանակութեամբ համապատասխան է, մօտաւորապէս,* Շուշիին. *ռուսների ձեռքն անցնելուց յետոյ գեղեցկացել է բազմաթիւ նոր շէնքերով»:*

---

12) *Յետագայի վարչական բաժանումը՝ Երեւանի նահանգի Երեւան, Էջմիածին, Սուրմալու, Նոր-Բայազիդ գաւառները եւ Շարուրի մէկ մասը: Բացի Շարուրից եւ Սուրմալուից՝ միւսները մտնում են Հայաստանի ներկայ սահմանների մէջ:*

13) *Յետագայի Երեւանի նահանգի Նախիջեւանի գաւառը եւ Շարուրի մի մասը, որ ներկայիս կազմում է «Նախիջեւանի ինքնավար շրջանը», եւ ենթակայ է Ադրբէջանին:*